«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն
Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219, 094 43 79 04,
E-mail: sara@hetq.am; info@hetq.am URL: www.hetq.am

N-h-2 10.01.2023թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանին

Հարգելի պրն Սարգսյան

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9, 12 հոդվածների պահանջների հիմքով խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները՝

2021-2022 թվականների ընթացքում ադրբեջանական ագրեսիաների հետևանքով տուժած համայնքներում վնասների հաշվառում կատարվե՞լ է: Եթե՝ այո, ապա խնդրում ենք հայտնել՝

1. Մարզի ո՞ր բնակավայրերին և ի՞նչ վնասներ է պատճառվել, հաշվարկվե՞լ է, թե գումարային առումով որքան է կազմել շենք-շինություններին, ենթակառուցվածքներին պատճառված վնասը (խնդրում ենք տեղեկատվությունը տրամադրել ըստ տարիների):
2. Բնակավայրերից յուրաքանչյուրում քանի՞ տուն է վնասվել, դրանցից քանի՞սն են ենթակա վերականգնման:
3. Կա՞ն անօթևան մնացած ընտանիքներ, որոնց տները հրետակոծությունից հետո ենթական չեն վերականգնման և քանի՞սն են:
4. Իրավաբանական անձինք վնասնե՞ր կրել են հրետակոծությունների հետևանքով և ի՞նչ բնույթի:
5. Վնասներ կրած բոլո՞ր քաղաքացիներին է փոխհատուցում տրամադրվել:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում՝ խնդրում ենք գրավոր տեղեկացնել մերժման հիմքի մասին («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 11):

Կանխավ շնորհակալություն՝

«Հետք» էլեկտրոնային օրաթերթի լրագրող Սառա Պետրոսյան